ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԱՂՎԱՆԻ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Թ.Ասատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր **Լ.Ա.Սահակյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լ.Գ.Ավանեսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Արցախի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. մարտի 13-ին ժամը 14.00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է փետրվարի 13 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտություններեոի թեկնածու.
դոցենտ՝ **Ս.Հ. ՍՎԱՋՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Մարդկությունը կանգնած է գլոբալ էկոլոգիական աղետի առջև: Էկոհամակարգերի վիճակի շարունակվող վատթարացման, բնական աղետների, շրջակա միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության պատճառով խախտվել է հասարակության և բնության փոխգործակցության հավասարակշռությունը: Այդ հավասարակշռությունը վերականգնելու համար պահանջվում է մարդկային մեծ ջանքերի գործադրում նրա կենսագործունեության բոլոր ոլորտներում: Մարդու գործունեության բացասական հետևանքների վերականգնման համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ, որոնցում առաջնային տեղ է զբաղեցնում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման խնդիրը՝ որպես էկոլոգիական դաստիարակության արդյունք:

Աճող սերնդի էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես կրթական համակարգի և մանկավարժական հետազոտությունների գերակա ուղղություն, ընդունված է 1977 թվականին Մոսկվայում կայացած մանկավարժների միջազգային համաժողովում:

Բնության հետ անձի ներդաշնակության հիմնախնդիրները բնութագրվել են հույն փիլիսոփաներ Արիստոտելի, Դեմոկրիտի, ինչպես նաև չեխ մանկավարժ Յա.Ա. Կոմենսկու, Ի.Գ. Պեստալոցցու, Ժ.Ժ. Ռուսսոյի, Կ.Դ. Ուշինսկու, Վ.Ա. Սուխոմլինսկու, Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ղ. Աղայանի, Ա. Բահաթրյանի, Ս. Մանդինյանի և այլոց աշխատություններում, որոնցում անձի զարգացման գործում մեծ տեղ է հատկացվում բնությանը:

70-ական թվականներին ձևավորվածէկոլոգիական հարացույցը հենվում էր անցյալի այն դրույթների վրա, որ մարդկությունը՝ գլոբալ էկոհամա-կարգի տեսակներից մեկը, և նրա գործունեությունը պայմանավորված է ոչ միայն սոցիալ-մշակութային գործոններով, այլև բնության հետ բարդ կապերով, ուստի նպատակաուղղված մարդկային գործունեությունը կարող է ունենալ անսպասելի հետևանքներ՝ խախտելով էկոլոգիական օրենքները:

Անձի էկոլոգիական կուլտուրայի սոցիալ-փիլիսոփայական տեսանկյունը դիտարկված է Ի.Դ. Զվերևի, Ն.Ն. Զախլեբնիի, Ի.Տ. Սուրավեգինայի, Ի.Է. Բեկկերի, Է.Վ. Գիրուսովի, Դ.Ս. Լիխաչևի, Ն.Ն. Մոիսեևի, Լ.Թ. Ասատրյանի, Մ.Ա. Ասատրյանի, Լ.Գ. Ավանեսյանի, Հ.Մ. Ազիզյանի, Ռ. Մարուխյանի, Ա. Հովսեփյանի և այլոց կողմից:

Դպրոցականների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման հոգեբանական տեսանկյունները դիտարկվել են Ի. Ի. Շվարցի, Վ. Ա. Յասվինի, Ա.Պ. Սիդելկովսկու, Լ.Պ. Բուևայի և այլոց կողմից: Նրանց ուշադրությունը հատկապես ուղղված է եղել տվյալ գործընթացի ներքին դրդապատճառների հետազոտմանը:

Ժամանակակից հետազոտություններում (Ա.Մ. Գալեևա, Ի.Ն. Պոնոմարյովա, Դ.Ս. Երմակով և Ի.Տ. Սուրավեգինա, Ա.Ն. Զախլեբնի, Վ.Ա. Բուխվալով, Է.Ս. Մարգարյան, Լ.Թ. Ասատրյան և այլք) հատուկ ուշադրություն է դարձվում այն

հանգամանքի վրա, որ էկոլոգիական կուլտուրայի զարգացումը ընթանում է բնօգտագործման և բնապահպանական պարզագույն գիտելիքներից դեպի առավել խոր էկոլոգիական գիտելիքների յուրացում և շրջակա միջավայրի պահպանմանը, վերականգնմանը, ինչպես նաև բնական աղետներից պաշտպանվելուն ուղղված մարդու նպատակաուղղված գործունեության ձևերի կատարելագործում:

Մեր հետազոտության համար հատուկ նշանակություն ունեն Ա.Ն. Զախլեբնիի, Ի.Դ. Զվերևի, Ի.Տ. Սուրավեգինայի, Ի.Վ. Պավլովի, Զ.Ն. Պլեչովայի, Ն.Ֆ. Ռեյմերսի, Օ.Ն. Յանիցկու, Լ.Թ. Ասատրյանի, Փ.Ա. Սարգսյանի և այլոց աշխատությունները, որոնցում խորությամբ ներկայացված են բնության դերը՝ որպես դաստիարակության կարևոր գործոնի՝ սկսած անձի նախադպրոցական տարիքից մինչև հասունություն:

Ուսումնական առարկայի շրջանակներում սովորողների պրակտիկ էկոլոգիական գործունեության կազմակերպման հարցերը դիտարկված են Ե.Ա. Մերկուլովի և Տ.Մ. Մերկուլովայի, Ի.Դ. Զվերևի և Ա.Ն. Զախլեբնիի, Ի.Տ. Սուրավեգինայի, Ե.Վ. Տիտովի և Դ.Լ. Տեպլովի, Գ.Ա. Յագոդինի, Լ.Վ. Հարությունյանի, Լ.Թ. Ասատրյանի, Ա.Հ. Աջամօղլյանի, Հ.Հ. Դերձյանի աշխատություններում:

Բնության պահպանության վերաբերյալ սովորողների արտաուսումնական աշխատանքների կազմակերպման ձևերն ու մեթոդները դիտարկված են Ն. Լ. Գորոդեցկայայի, Վ. Ի. Պախոմովի, Ն. Ն. Բարխինցևայի ու Ե.Ա. Սլուցկովայի, Վ.Մ. Սենկևիչի, Մ.Ն. Շիլովի, Օ.Վ. Գլուշենկովի, Գ.Ն. Վոլկովի, Մ.Մ. Ուշակովի և այլոց աշխատություններում:

Բնավ չթերագնահատելով հիմնախնդրի վերաբերյալ կուտակած հետազոտությունների դերն ու նշանակությունը՝ մենք կարծում ենք, որ լիարժեքացման և արդիականացման կարիք են զգում «բնապահպանական և բնօգտագործման կուլտուրա» հասկացության կառուցվածքային բաղադրիչները և դրա ձևավորման միջոցներն ու ձևերը: Պրակտիկան ցույց է տալիս, որ ներկա ժամանակաշրջանում ավելի ու ավելի են դրսևորվում հակասությունները «մարդ-բնություն-հասարակություն» հարաբերության համատեքստում անձի նկատմամբ օբյեկտիվորեն աճող պահանջմունքների և բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման մակարդակի միջև:

Հանրապետության մի շարք դպրոցներում սովորողների էկոլոգիական դաստիարակության մակարդակի վերլուծությունը ցույց տվեց ուսումնական ծրագրերի անբավարար կողմնորոշվածությունը դեպի սովորողների էկոլո-գիական գործնական կարողությունների և բնապահպանական և բնօգտա-գործման կուլտուրայի ձևավորմանը:

Սրանով է պայմանավորված ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է մշակել, համալրել և գիտափորձով հիմնավորել ուսումնական և արտաուսումնական գործունեության մեջ հիմնական դպրոցի սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցներն ու ձևերը:

Հետազոտության օբյեկտը հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կրթության գործընթացն է:

Հետազոտության առարկան հիմնական դպրոցում բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցների և ձևերի համալիրն է:

Հետազոտության հիմքում ընկած է այն վարկածը, որի համաձայն հիմնական դպրոցում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորումը արդյունավետ կլինի եթե՝

- սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման գործընթացը հիմնվի էկոլոգիական կրթության և դաստիարակության ոլորտում հայրենական և արտերկրյա գիտնականների հետազոտությունների և հայեցակարգային մոտեցումների ստեղծագործական կիրառման վրա,
- ապահովվի սովորողների ուսումնական և արտաուսումնական էկոլոգիական գործունեության փոխկապակցվածությունը և սովորողների ներգրավումը բնաճանաչողական, բնապահպանական, հետազոտական և բնության վերականգնման, բնական աղետների դիմակայելու միջոցների մշակման և յուրացման ակտիվ գործունեության մեջ,
- մշակվեն սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորմանը նպաստող միջոցների ու ձևերի արդյունավետ համալիր, որն ուղղված կլինի սովորողների բնաճանաչողական ընդունակությունների, բնապահպանական կարողությունների և հմտությունների արժեհամակարգի զարգացմանը:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել հիմնախնդրի ուղղությամբ առկա փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական, էկոլոգիական տեսությունները և հայեցակարգային մոտեցումները, որոշել նրա մշակվածության աստիճանը,
- բացահայտել հիմնական դպրոցներում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորվածության արդի վիճակը, նրա ձևավորման վրա ազդող գործոնները և մանկավարժական պայմանները,
- ելնելով հասարակության կայուն զարգացման խնդիրներից՝ նորովի սահմանել սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի կառուցվածքային բաղադրիչները և ենթակառուցվածքները,
- մշակել, համալրել և գիտափորձով հիմնավորել սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման գործընթացի արդիականացման ուղիները, չափանիշները, միջոցների ու ձևերի համալիրը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում էկոլոգիական դաստիարակության տեսությանը և պրակտիկային վերաբերող հետազոտությունները, էկոլոգիական կրթության ժամանակակից հայեցակարգերն ու մեթոդաբանական մոտեցումները, հասարակության, մարդու և բնության փոխգոր-

ծակցության համակարգակառուցվածքային և համալիր ուսումնասիրման, բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման ուղղությամբ սովորողների բնապահպանական գործունեությունը, գործնական մասնակցության առաջատար դերի մասին գաղափարները, կայուն զարգացման տեսությունը::

Հետազոտության վարկածի հաստատման և առաջադրված խնդիրների լուծման համար, հետազոտության տարբեր փուլերում օգտագործվել են հետևյալ **գիտահետազոտական մեթոդները՝**

- տեսական՝ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մշակութաբանական գրականության վերլուծություն, էկոլոգիական կրթության և դաստիարակության վերաբերյալ եղած հայեցակարգերի, մոտեցումների վերլուծություն և հաադրում,
- էմպիրիկ՝ անկետավորման, թեստավորման, դեռահասների էկոլոգիական դաստիարակվածության, բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման դինամիկայի դիտման, զրույցի, հարցազրույցի, մաթեմատիկական և վիճակագրական մշակման, մանկավարժական փորձի ուսումնասիրման:

Հետազոտության գիտական նորույթը.

- հասարակության կայուն զարգացման համատեքստում նորովի մոտեցում է ցուցաբերված հիմնական դպրոցում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի էության և կառուցվածքային բաղադրիչների բնութագրմանը: Հիմնավորվել է, որ սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ենթակառուցվածք է նաև բնական աղետներին դիմակայելու, դրանցից պաշտպանվելու և աղետների ռիսկերի նվազեցման մշակույթը,
- հիմնավորվել են բնության վերականգնման, սովորողների էկոլո-գիական հետազոտական, քարոզչական գործունեության ակտիվացման անհրաժեշտությունը,
- մշակվել և համալրվել են հիմնական դպրոցում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցներն ու ձևերը:

Հետազոտության տեսական նշանակությունը որոշվում է հիմնական դպրոցում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցներն ու ձևերի արդյունավետ կիրառման տեսական հիմնավորմամբ և ստացված հետազոտական տվյալներով:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական պրակտիկ գործունեության կազմակերպման, բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցներն ու ձևերը կարող են ներդրվել հանրակրթական դպրոցների կրթադաստիարակչական գործընթացում, իսկ այդ գործընթացի արդյունավետությանն ուղղված գիտամեթոդական երաշխավորագրերը կարող են օգտագործվել ուսուցիչների և համապատասխան առարկայական խմբակների ղեկավարների

կողմից ինչպես ուսուցման գործընթացում, այնպես էլ արտաուսումնական դաստիարակչական միջոցառումների կազմակերպման ժամանակ:

Հետազոտությունն անցկացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2001-2003) ուսումնասիրվել է հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գրականությունը:

Երկրորդ փուլում (2004-2006) ուսումնասիրվել է դպրոցների պրակտիկայում էկոլոգիական կրթության կազմակերպման վիճակը, որոշվել են աշխատանքի ելակետային դրույթները, հետազոտության խնդիրները, սահմանվել է վարկածը, մշակվել են գիտափորձի պլանը և նրա դիդակտիկական ու մեթոդական ապահովումը:

Երրորդ փուլում (2007-2009) ի մի են բերվել գիտափորձի արդյունքները, որոնք վիճակագրական և մաթեմատիկական մշակման են ենթարկվել, մշակվել են հետազոտության գիտամեթոդական երաշխավորագրերը:

Հետազոտության համար փորձարարական բազա են հանդիսացել Երևան քաղաքի թիվ 6, 119, 194, Սևան քաղաքի թիվ 6 և Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գյուղի դպրոցները:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

- Հասարակության կայուն զարգացման արդի փուլում էական նշանակություն է ձեռք բերում շրջակա միջավայրի պահպանության, բնության վերականգնման, բնական պաշարների խնայողական օգտագործման, բնական աղետներից պաշտպանվելու հիմնախնդիրը, որի լուծումը անմիջականորեն պայմանավորված է սովորողներին էկոլոգիական կրթության ուղղվածության, բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորվածության մակարդակով:
- Հիմնական դպրոցում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման արդյունավետությունը պայմանավորված է բնապահպանական, բնության վերականգնման, հետազոտական գործունեության մեջ նրանց ակտիվ ներգրավման ձևերի ու միջոցների կատարելագործմամբ:
- Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրան ներառում է անձի էկոլոգիական գիտակցությունը, էկոլոգիական վարքը, էկոլոգիական արժեքային կողմնորոշումները, ինչպես նաև բնական աղետներից պաշտպանվելու, դրանց դիմակայելու, բնապահպանական և բնօգտագործման գիտելիքների և կարողությունների համակարգը:

Հետազոտության հավաստիությունն ու հուսալիությունն ապահովված է մի կողմից ատենախոսության մեթոդաբանությամբ, տրամաբանությամբ, բովանդակալից կառուցվածքով, հեղինակի ելակետային գիտական դիրքորոշման հստակությամբ, հետազոտության էությանը և բնույթին համապատասխան միջոցների և ձևերի օգտագործմամբ, մյուս կողմից փորձարարական աշխատանքների հիմնավորապես մտածված ծրագրով, գիտափորձին մասնակցողների մեծ քանակով և հետազոտության արդյունքների վիճակագրական գրագետ մշակմամբ, գիտափորձի տևողությամբ:

Հետազոտության փորձաքննությունը.

Հետազոտության հիմնական դրույթների և եզրակացությունների փորձաքննությունը կատարվել է հանրապետության մի շարք դպրոցներում, գիտական համաժողովներում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ընդհանուր մանկավարժության ամբիոնի նիստերում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը կազմում է համակարգչային 150 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **«Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման մեթոդաբանական հիմունքները»** խորագիրը կրող **առաջին գլուխը** բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը» ենթագլխում դիտարկված են սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման վերաբերյալ մի շարք հետազոտություններ, հայեցակարգային մոտեցումներ, որոնցում հիմնավորվում է, որ արդի ժամանակաշրջանում անձի էկոլոգիական դաստիարակության խնդիրներ են համարվում սովորողների ձեռք բերած էկոլոգիական գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգի հիման վրա էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական մտածողության, էկոլոգիապես արդարացված վարքի, բնությունը որպես եզակի արժեքի ընկալման ձևավորումը, որոնք կազմում են անձի բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի կառուցվածքային բաղադրիչները: Անձի բնապահպանական և բնօգտագործման կուլտուրան հասարակության ընդհանուր կուլտուրայի կարևորագույն գումարելին է, որը ներառում է հասարակության մեջ ավանդաբար ձևավորված էկոլոգիական դաստիարակության ու կրթության համակարգը:

Մեր կարծիքով սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորմանն ուղղված պրակտիկ գործունեությունը պետք է իր մեջ ներառի բնության պահպանության, նրա վերականգնման, բազմապատկման, բնության վիճակի գնահատման, աղետների ռիսկերի նվազեցման, բնության պահպանման գաղափարների քարոզչության ուղղությամբ իրականացվող գործունեության ձևերը: Այսինքն՝ բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման արդյունավետությունը պայմանավորված է դպրոցականներին բնապահպանական, երկրագիտական, հետազոտական,

քարոզչական համալիր աշխատանքների մեջ ներգրավելուց՝ օգտագործելով ուսումնադաստիարակչական աշխատանքի բոլոր ձևերն ու մեթոդները:

Հիմնավորվում է, որ հասարակության կայուն զարգացումը ենթադրում է բնական պաշարների օգտագործում և մարդկանց էկոլոգիական անվտանգության ապահովում: Սակայն այս խնդիրների լուծումն անհնար է առանց էկոլոգիական գիտելիքների, բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի պատշաճ մակարդակի ապահովման:

Աճող սերնդի բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման հիմնախնդիրների իրացման գործում առաջնային տեղ է հատկացվում հիմնական դպրոցին:

Մեր կարծիքով, անձի բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի հիմքը կազմում է նրա էկոլոգիական ուղղվածությունը, որը բնութագրում է էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության գործունեությունը, բնական աղետներին դիմակայելուն, դրանցից պաշտպանվելուն սովորողների պատրաստվածության աստիճանը, ինչպես նաև բնորոշում է էկոլոգիական կրթության հենքային բաղադրիչների յուրացման, դրդապատճառային ոլորտի ձևավորվածության մակարդակը:

Սովորողների էկոլոգիական դաստիարակությունը, դրա արդյունքում ձևավորված բնապահպանական և բնօգտագործման կուլտուրան սերտորեն կապված են բարոյական, գեղագիտական, իրավական, աշխատանքային դաստիարակության հետ:

Նորովի են ներկայացվել սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի կառուցվածքը և ենթակառուցվածքները:

Երկրորդ «Հիմնական դպրոցի սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման վրա ազդող գործոնները» խորագրով ենթագլխում նշվում է, որ սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը ցույց տվեց, որ 21-րդ դարում մարդու և հասարակության առջև նոր նպատակ և նոր ուղղընթացներ են ընդգծվել, որին հասնելու համար պահանջվում է նոր տիպի կուլտուրայի ձևավորում, որը կհենվի կոլեկտիվ մտածողության, կորպորատիվության, կոլեկտիվ անվտանգության ժամանակակից մոտեցումների վրա:

Հիմնավորվում է, որ հիմնական դպրոցի սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորումը՝ որպես էկոլոգիական դաստիարակության գերակա խնդիր, պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց թվին մենք դասում ենք.

1. էկոլոգիական կրթության արդիականացումը:
2. Սովորողների ներգրավումը բնաճանաչողական և ակտիվ էկոլոգիական պրակտիկ գործունեության մեջ:

3. Աղետներին դիմակայելու և աղետների ռիսկերի նվազեցման կարողությունների, հմտությունների ձևավորմանն ուղղված արդյունավետ կրթալուսավորական աշխատանքների կազմակերպումը:
4. Սովորողների բնաճանաչողական և բնապահպանական պահանջմունքների ձևավորման և դրդապատճառային ոլորտի խթանման ակտիվ ձևերի կիրառումը:

Բնութագրված են այդ գործոնները:

Երրորդ՝ «Հիմնական դպրոցի սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման առանձնահատկությունները, փուլերը և մանկավարժական պայմանները» ենթագլխում դիտարկված են բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման առանձնահատկությունները.

- Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորումը անմիջականորեն պայմանավորված է նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների հետ:
- Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման հիմքը կազմում է էկոլոգիական կրթությունը:
- Բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման աստիճանականությունը:
- Սովորողների տվյալ տարիքի բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորումը պայմանավորված է տվյալ տարածքի բնակլիմայական, պատմամշակութային յուրահատկությամբ:

Բնութագրված են բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման փուլերն ու մանկավարժական պայմանները:

Ատենախոսության՝ **«Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման գործընթացի արդյունավետության միջոցների և ձևերի համալիրը»** խորագիրը կրող **երկրորդ** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցների և ձևերի բնութագիրը» ներկայացված և բնութագրված են դեռահասների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցների ու ձևերի համալիրը, դրանց իրականացման հիմնական ուղղությունները: Հիմնական դպրոցում սովորողների էկոլոգիական կուլտուրայի ձևավորման արդյունավետությունը պայմանավորված է նրանց գործունեության տարբեր ձևերով՝ ուսումնական աշխատանք, բնաճանաչողական էքսկուրսիաներ, երկրագիտական արշավներ, ինքնաճանաչողական բովանդակությամբ տարբեր մրցույթներ, համադպրոցական էկոլոգիական միջոցառումներ, էկոլոգիական թեմաներով գիտագործնական համաժողովներ, աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքներ, էկոլոգիական բովանդակությամբ դպրոցական տոներ, էկոլոգիական տասնօրյակներ, բնապահպանական ակցիաներ,

էկոլոգիական օլիմպիադաներ, էկոլոգիական ուղղվածությամբ հետազոտական աշխատանքներ:

Բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցներն են՝ էկոլոգիական դաստիարակչական աշխատանքների նախագծումը, բնաճանաչողական, բնապահպանական, տեղեկատվական, հետազոտական գործունեությունը, քարոզչությունը, էկոլոգիական ճամբարները, աշակերտական ընկերությունները, բնապահպանական խմբակները, էկոլոգիական բովանդակությամբ նախասիրական պարապմունքները: Գործունեության բոլոր այս ձևերը ունեն իրական նպատակներ և իրենց մեջ կրում են զարգացնող և դաստիարակող մեծ ներուժ:

Նշվում է, որ հատուկ տեղ պետք է հատկացնել սովորողների էկոլոգիական զարգացման գործնական ուղղվածությանը՝ նրանց բնապահպանական քարոզչական աշխատանքներ վարելու, բնական աղետներից պաշտպանվելու կարողությունները զարգացնելու համար, ինչը ուղղված պետք է լինի բնական հարստությունների պահպանմանը, վերականգնմանը և բազմապատկմանը:

Երկրորդ ենթագլխում՝ «Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցների ու ձևերի փորձարարական ստուգումը» ներկայացված է հիմնական դպրոցի սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորմանն ուղղված միջոցների ու ձևերի կիրառման փորձարարական աշխատանքների ընթացքը: Հիմնավորվում է, որ սովորողների բնապահպանական և բնաճանաչողական կուլտուրայի ձևավորումը հանդիսանում է սովորողների դաստիարակության նպատակաուղղված համակարգի օրգանական մասը:

Փորձարարական ուսուցման մեջ դեռահասների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի գործնական կողմի զարգացման աստիճանի բացահայտման համար մենք ընդհանրացրել ենք տվյալներ, որոնք ստացվել էին ստուգատեսների աշխատանքների, թեստավորման արդյունքների, հարցաշարերի պատասխանների արշավների, փորձերի, արդյունքների քանակական և որակական մշակման ժամանակ: Սովորողների վերաբերմունքը բնության նկատմամբ բացա-հայտվել է հարցազրույցների, գրավոր և բանավոր հարցումների, նկարների, բնության մեջ իրական վարքի դրսևորման վերլուծության միջոցով:

Որպես բնապահպանական և բնության վերականգման հիմնական միջոցառումներ դեռահաս դպրոցականները առանձնացնում են՝ շաբաթօրյակները, կանաչապատումները, թափոնների վերամշակումը և օգտագործումը: 7-8-րդ դասարանների աշակերտները առաջարկում են ստեղծել էկոլոգիական երիտասարդական ակումբներ, ընկերություններ, որոնք կզբաղվեն դպրոցականների հետ բնապահպանական աշխատանքների կազմակերպմամբ և էկոլոգիական քարոզչությամբ:

Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման ցուցանիշներից մեկը համարվում է բնության նկատմամբ նրանց վերաբերմունքը, բնապահպանական իրավական նորմերի պահպանումը:

Երրորդ ենթագլխում՝ «Փորձարարական աշխատանքի արդյունքների վերլուծությունը» բնութագրված են հետազոտության հիմնախնդրի լուծմանն ուղղված փորձարարական աշխատանքների փուլերը, նպատակները: Ներկայացված են հիմնական դպրոցում սովորողների շրջապատող միջավայրի էկոլոգիական վիճակի մասին, շրջակա միջավայրի աղտոտվածության, բնական աղետներին դիմակայելու մասին ունեցած գիտելիքների առկայության ախտորոշման տվյալները:

Հետազոտությունները ցույց են տվել, որ իրենց տեղանքի, շրջակա բնական միջավայրի մասին հիմնական դպրոցի սովորողների գիտելիքների մակարդակը համեմատաբար բարձր է, չնայած դպրոցականների մի մասը, մասնավորապես գյուղական դպրոցների, ցուցաբերել է տվյալ հիմնախնդրի վերաբերյալ նեղ ըմբռնում: Շրջապատող միջավայրի աղտոտվածության հիմնական պատճառը նրանք համարում են կենցաղային թափոնները:

Հետազոտությամբ բացահայտվեց պրակտիկ գործունեության իրականացման անբավարար ուղղվածությունը դպրոցներում: Բացահայտված թերությունների պատճառներ ենք մենք համարում՝

- էկոլոգիական կրթության պրակտիկ ուղղվածության տեսության և մեթոդների անբավարար մշակվածությունը,
- պրակտիկ էկոլոգիական գործունեության ծրագրերի թույլ գործնական ուղղվածությունը,
- դասարանների դաստիարակչական աշխատանքային պլաններում էկոլոգիական գործնական աշխատանքների լիովին բացակայությունը, ինչպես նաև նրանց անբավարար պատրաստվածությունը:

Հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ Սևանի դպրոցի սովորողների էկոլոգիական գիտելիքների և արժեհամակարգի միջին մակարդակը, որոնք համարվում են նրանց բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի բաղադրիչները, ավելի բարձր են, քան Երևան քաղաքի սովորողներինը: Երևան քաղաքում հետազոտության ենթարկված 100 սովորողներից 48-ն է 13-17 միավոր հավաքել, իսկ Սևան քաղաքում՝ 67-ը: Երևան քաղաքում 18 աշակերտ հավաքել է 12 և ցածր միավոր, իսկ Սևանում՝ 14 աշակերտ: Երևան քաղաքում 34 սովորող հավաքել է 18 և բարձր միավոր, իսկ Սևան քաղաքում՝18 և բարձր միավոր հավաքել է 19 սովորող: Ավելի ակնառու լինելու համար արդյունքները կարող ենք ներկայացնել աղյուսակի ձևով՝:

Աղյուսակ 1

7-8-րդ դասարանների սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի բաղադրիչների ձևավորվածության արդյունքները

	Հավաքած միավոր-ների քանակը	Սովորողների քանակը
Երևան	12 և ցածր	18
	13-17	48
	17 և բարձր	34
Սևան	12 և ցածր	14
	13-17	67
	17 և բարձր	19



Գծապատկեր 1. 7-8-րդ դասարանների սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի բաղադրիչների ձևավորվածության արդյունքները

Բերված տվյալներից երևում է, որ սովորողների բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորման գործում, մեծ դեր է խաղում անմիջական շփումը բնության հետ, հատկապես գյուղական դպրոցների սովորողների: Երկրորդ տեղում է դասերի ընթացքում ստացած գիտելիքները: Սովորողների մեծամասնության, հատկապես դեռահասների վրա, մեծ ազդեցություն է թողնում հաճախումը բնության թանգարան, բնության վերաբերյալ վավերագրական ֆիլմերիը, որը բնորոշ է քաղաքի դպրոցների սովորողներին:

Արձանագրող գիտափորձի արդյունքների վերլուծությունը մեզ թույլ տվեց պայմանականորեն առանձնացնել դեռահասների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի 3 մակարդակ (բարձր, միջին, ցածր) և նկարագրել յուրաքանչյուր մակարդակում գտնվող սովորողի հիմնական բնորոշիչ առանձնահատկությունները:

Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորվածության աստիճանի քանակական վերլուծության ընդհանրացված տվյալները ցուցադրված են 2-ր աղյուսակում: Սովորողների ընդհանուր քանակը, ովքեր մասնակցում էին փորձին կազմում է 100 մարդ, որոնցից 27-ը 6^{ա} դասարանի սովորողներ են (թիվ 6 դպրոց), 23-ը՝ 6^{ա} դասարան, 26-ը՝ 6^{գ} դասարանի (թիվ 119 դպրոց), 24-ը՝ 6^{բ} դասարանի (թիվ 194 դպրոց):

Աղյուսակ 2

Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման աստիճանի ընդհանուր ցուցանիշներ, թվային արտահայտությամբ ըստ այս կամ այն հատկանիշի

	Ձևավորման մակարդակները	2001/2002 6-րդ դասարան		2002/2003 7-րդ դասարան		2003/2004 8-րդ դասարան	
		ստ	փորձ.	ստ.	փորձ.	ստ.	փորձ.
1.Էկոլոգիական գիտելիքներ	I II III	1 10 39	2 18 30	2 12 36	5 25 20	2 11 37	6 28 16
2. Բնության գեղեցկության և նշանակության գիտակցումը	I II III	3 12 35	5 14 31	3 14 33	8 18 24	3 15 32	10 20 20
3. Հետաքրքրությունը բնության նկատմամբ և նրա ուսումնասիրությունը	I II III	2 10 38	1 12 37	2 12 36	4 16 30	3 13 34	8 20 22
4. Բնապահպանության հմտություններ և կարողություններ	I II III	3 7 40	0 10 40	2 9 39	5 14 31	0 10 40	9 16 25
5. Շրջապատող միջավայրի նկատմամբ հոգատար և պատասխանատու վերաբերմունքի արտահայտում	I II III	2 4 44	5 8 37	3 7 40	9 14 27	4 8 38	12 16 22
6. Բնապահպանության մեջ ակտիվություն և ինքնուրույնություն	I II III	5 20 25	10 22 18	6 21 23	17 20 13	6 23 21	22 20 8

Աշակերտների թիվը
(ցուցադրված նյութ-9)



Աշակերտների թիվը
(ցուցադրված նյութ-7)



Աշակերտների թիվը
(ցուցադրված նյութ-8)



Այսպիսով, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, պրակտիկ գործունեության տարբեր ձևերի և միջոցների ստեղծագործական համադրումը և կիրառումը արդյունավետ է դարձնում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման գործընթացը:

Կատարած տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունը, դրանց քննարկումը և ընդհանրացումը հնարավորություն ընձեռնեցին կատարել հետևյալ **եզրակացությունները.**

1. Բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման միջոցների բացահայտման համար մեր կողմից ուսումնասիրվել է հիմնախնդրի մշակվածության աստիճանը և տրվել է հիմնախնդրի վերաբերյալ տեսական հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը:
2. Հասարակության կայուն զարգացման նոր հարացույցի ձևավորման համատեքստում բնապահպանական և բնօգտագործման կուլտուրա հասկացությունը ենթադրում է նոր հարաբերությունների ստեղծում «մարդ-բնություն-հասարակություն »փոխգործակցության մեջ: 21-րդ դարում առաջնահերթ է դառնում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման հիմնախնդիրը՝ որպես կրթական գործընթացի գերակա ուղղություն:
3. Հետազոտությամբ բացահայտվել են հիմնական դպրոցներում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորվածության արդի վիճակը, նրա ձևավորման վրա ազդող գործոնները և մանկավարժական պայմանները: Հիմնական դպրոցում սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման մանկավարժական պայմաններ ենք համարում՝
   - ուսումնական և արտաուսումնական տեսական և պրակտիկ էկոլոգիական գործունեության համադրումը,
   - սովորողների ներգրավումը բնապահպանական, բնության վերականգնման ուղղված համակարգված համատեղ աշխատանքներում,
   - էկոլոգիական բովանդակությամբ գործնական առաջադրանքների, միջոցառումների , ծրագրերի մշակումը և դրանց կիրառումը արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներում,
   - էկոլոգիական դաստիարակչական ծրագրերի մշակում և ներդնում՝ մասնակից դարձնելով նաև հիմնական դպրոցի սովորողներին,
   - հանրապետության հիմնական դպրոցների համագործակցություն՝ սովորողների էկոլոգիական դաստիարակության ուղղությամբ մասսայական աշխատանքների կազմակերպման միջոցով:
4. Հետազոտությամբ բացահայտվեց սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման փուլերը և առանձնահատկությունները:
5. Ելնելով հասարակության կայուն զարգացման խնդիրներից՝ նորովի են սահմանվել սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի կառուցվածքային բաղադրիչները և ենթակառուցվածքները:

Մասնավորապես, մենք սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ենթակառուցվածք ենք համարում աղետների ռիսկերի նվազեցման կուլտուրան:

6. Մշակվել, համալրվել և գիտափորձով հիմնավորվել են սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման գործընթացի արդիականացման ուղիները, չափանիշները, միջոցների ու ձևերի համալիրը:
7. Սովորողների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման մեջ հատուկ նշանակություն է ստանում նրանց կողմից բնության մասին տեղեկությունների յուրացումը, էկոլոգիապես արդարացված վարքը, վերաբերմունքը, որն արտացոլված է հայ ժողովրդի էթնոմանկավարժական հարուստ ժառանգությունում՝ ժողովրդական բանահյուսության մեջ, երգերում, հեքիաթներում, էպոսում, հանելուկներում, առակներում, ասացվածքներում, սովորույթներում:
8. Հետազոտությամբ ապացուցվեց էկոլոգիական ճամբարների և աշակերտական էկոլոգիական ընկերությունների դերը սովորողների բնապահպանական, բնօգտագործման, բնական աղետներից պաշտպանվելու և դրանց դիմակայելու կարողությունների ու հմտությունների ձևավորման գործում:
9. Հետազոտությամբ բացահայտվեց, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել սովորողների պրակտիկ գործունեության քարոզչական, հետազոտական ձևին, որոնց շնորհիվ զարգանում են նրանց հետազոտական-ստեղծագործական կարողությունները, աշխարհայացքը և արժեքային կողմնորոշումները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Դեռահասների գործնական մասնակցությունը բնապահպանական աշխատանքներին որպես նրանց էկոլոգիական մշակույթի բարձրացման գործոն, Կրթությունը և գիտությունը Արցախում, 3-4, Երևան, 2004թ., էջ 118-123:
2. Դեռահասների կուլտուրայի ձևավորումը՝ որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 1[5] 2005թ., 77-80էջ:
3. Մանկավարժական կոլեկտիվի դերը դեռահասների բնապահպանական և բնօգտագործման կուլտուրայի ձևավորման գործում, Ժողովածու Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի (2009թ. նոյեմբերի 19-21), Պրակ, ՀՊՄՀ Երևան «Մանկավարժ» 2010., էջ 54-57:
4. Արտաուսումնական աշխատանքների դերը սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացում, Խ.Աբովյանի անվ.

ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա (2012թ. դեկտեմբերի 14), 1-ին ՊՐԱԿ, Երևան, «Մանկավարժ» հրատ, 2013թ., էջ 276-279:
5. ժողովրդական բանահյուսության և գրական ստեղծագործությունների դերը սովորողների էկոլոգիական գիտակցության ձևավորման գործում, Երևան, «Մանկավարժություն» ամսագիր, թիվ 1, 2013թ., էջ 52-56:
6. Ազգային տոների դերը սովորողների էկոլոգիական դաստիարակության ձևավորման գործում, Երևան, »Մանկավարժություն» ամսագիր, թիվ 6, էջ 15-18:

БАГДАСАРЯН АРМИНЕ АГВАНОВНА

СРЕДСТВА И ФОРМЫ ФОРМИРОВАНИЯ ПРИРОДООХРАНИТЕЛЬНОЙ И ПРИРОДОПОЛЬЗОВАТЕЛЬСКОЙ КУЛЬТУРЫ У УЧАЩИХСЯ ОСНОВНОЙ ШКОЛЫ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01.- „Теория и история педагогики".

Защита диссертации состоится 13-марта 2014 года в 14.00 на заседании специализированного совета „Педагогика" 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 0010, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Человечество стоит перед глобальным экологическим бедствием. Из-за продолжительного ухудшения состояния экосистем, стихийных бедствий, негативного влияния человека на окружающую среду нарушился баланс взаимодействия общества и природы. Чтобы востановить этот баланс нужны большие человеческие усилия во всех сферах жизнедеятельности. Для восстновления негативных последствий деятельности человека нужно решать много задач, в которых первичное место занимает проблема формирования экологической культуры личности – как результат экологического воспитания. Практика показывает, что в настоящее время все больше и больше проявляются противоречия в контексте отношений "человек-природа-общество" между объективно возрастающими требованиями человека и уровнем сформированности экологической культуры.

Во многих школах республики анализ уровня экологического воспитания учащихся показал недостаточную ориентацию учебных программ на образование культуры их экологических, практических способностей , защиты и использование окружающей среды.

Исходя из оценивая роли и значения исследуемой проблемы, мы считаем, что структурные компоненты и средства образования, понятие культура защиты и использование окружающей среды нуждаются в уточнении и актуализации.

Этим обусловлена актуальность темы исследования.

Цель исследования: разработать, пополнять и экспериментально обосновать средства и формы формирования природоохранительной и природопользовательской культуры в учебной и внеучебной деятельности у учащихся основной школы .

Задачи исследования:

- изучить философские, педагогические, психологические, экологические теории и концептуальные подходы к исследуемой проблемы

- выявить уровень сформированности природоохранительной и природопознавательской культуры, а также влияние факторов и педагогических условий на сформирование этого качества у учащихся основной школы,
- исходя из задач устойчивого развития общества по-новому определить структурные компоненты культуры защиты и использования окружающей среды,
- разработать и экспериментально обосновать пути, критерии, средства и формы актуализации процесса формирования культуры защиты и использовании окружающей среды у учащихся.

Научная новизна исследования:

- определен новый подход к описанию сущности и структурных компонентов культуры защиты и использования окружающей среды у учеников основной школы . Обосновано, что в структуре культуры учеников по защите и использованию окружающей среды входит так же и культура противостояния стихийным бедствиям и защиты от них,
- обоснована необходимость активации экологической, исследовательной, пропагандической деятельности учащихся,
- разработаны и дополнены средства и формы образования природоохранительной и природопознавательской культуры у учеников основной школы.

Теоретическая значимость исследования:

- определяется теоретическим обоснование эффективности применения рекомендованных средств и форм, а также полученых результатов исследования

Практическая значимость исследования состоит в том, что средства и формы организации экологической, практической деятельности и образования культуры защиты и использовании окружающей среды у учеников основной школы могут быть внедрены в учебно-воспитательный процесс общеобразовательной школы. Научно-методические рекомендации по эффективности этого процесса могут использоваться учителями и руководителями кружков соответственных предметов как в учебном процессе, так и в организации внеклассных и внешкольных воспитательних мероприятий.

Достоверность и надежность исследования гарантировано, с одной стороны, методикой, логикой, структурным содержанием диссертации, четкостью исходной научной позиции автора, использованием средств и форм, которые соответствуют сущности и содержанию исследования, с другой стороны основательно продуманной программой экспериментальных работ, большим количеством участников эксперимента, статистической грамотной разработкой результатов исследования и длительностью эксперимента.

Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка литературы. Обьем диссертации 150 стр. компьютерного текста.

BAGHDASARYAN ARMINE AGVAN

MEANS AND FORMS OF THE ARRANGEMENT OF THE CULTURE OF ENVIRONMENTAL PROTECTION AND USE IN PRIMARY SCHOOL

The defence of the dissertation will take place at the 020 'Pedagogy' Specialsed Board Session of the Supreme Certifying Commission on March 13, 2014, at 2:00 pm, at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: Tigran Mets Str. 17, Yerevan 0010.

SUMMARY

The relevance of the research: Humanity faces a global ecological disaster. The balance of the correlation between society and nature has been violated because of the continuously worsening situation of ecosystems, natural disasters and humans' negative impact on the environment. In order to recover this balance great efforts are needed in all the spheres of human activity. It is also necessary to solve many problems to reduce the consequences of human activity. From this point the problem of the formation of person's ecological culture as a result of ecological education is primary. The practice showed that nowadays the contradictions between the objectively rising needs towards a person and the level of the formation of ecological culture are reflected more and more in the context “man-nature-man”.

In many schools of the country the analysis of the level of ecological education of the students has indicated insufficient orientation of educational programs towards the formation of the culture of their ecological, practical abilities and the environmental protection and use.

Without underestimating the role and the importance of the investigated problem we consider that the structural components and means of the formation of the concept of the culture of environmental protection and use need fulfillment and actualization.

The topicality of the research is conditioned by the mentioned statements.

This research aims to explore and justify with a scientific expertize the means and forms of the cultural formation of teenagers in the sphere of environmental protection and use during the study process and out of class activity.

The main objectives of the research:

- study the philosophical, pedagogical, psychological, ecological theories and conceptual approaches towards the objectives,
- explore the actual state of the formation of the culture of environmental protection and use among the students of primary school,
- proceeding from the objectives of sustainable development of society newly define the structural components of the culture of environmental protection and use,
- develop and justify with an experiment the complex of ways, criteria, means

and forms of the actualization of the process of the formation of the culture of environmental protection and use among the students,

- test pedagogically the complex of the offered means and forms.

The scientific novelty of the research:

- A new approach is developed towards the description of the content and structural components of the culture of the environmental protection and use among the students of primary school within the context of sustainable development of the society. It is proved that in the structure of the culture of the students regarding the environmental protection and use there are also included the culture of the confrontation and protection from the natural disasters.
- The necessity of the natural recovery, the activation of students' ecological, research activity is substantiated.
- The means and forms of the arrangment of the culture of the primary school students in the environmental protection and use are developed and supplemented.

Theoretical value of the research:

- Theoretical bases of the culture of environmental protection and use of the students are enriched in the context of sustainable development.
- The means and forms of the arrangement of the culture of environmental protection and use are confirmed among the students of primary school.

Practical value of the research consists in the fact that the means and forms of the organization of ecological, practical activity and the formation of the culture of environmental protection and use among the primary school students can be included in educational process, and the scientific, methodological reccomendations towards the efficacy of that process can be used by teachers and heads of the clubs of corresponding subjects during the educational process as well as the out-class activities.

Validity and reliability of the research are guaranteed by methodology, logic, the structural content of the research, clarity of author's basic, scientific positions, the use of the means and forms which correspond to the essence and characteristics of the research from one side, and the detailed planned program of the practical works, a great number of the participants in the experimetns, statistics of the from the correctly developed results of the research and the duration of the experiment from the other side.

The structure of the research consists of introduction, two chapters, conclusion, bibliography. The dissertation is comprised of 150 pages.